Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Չարենցավանի Ամենայան Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Ինֆորմատիկա» (19 դասաժամ), «Տեխնոլոգիա/տղաների» (9 դասաժամ), «Ֆիզկուլտուրա» (22 դասաժամ), «Կենսաբանություն» (8 դասաժամ), «Աշխարհագրություն» (8 դասաժամ), «Մաթեմատիկա» (8 դասաժամ) և «Դասվար» (13 դասաժամ) առարկաների ուսուցչների թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2023թ-ի նեյեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 04-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 16:00-ն, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. դեկտեմբերի 08-ին՝ ժամը 15:00-ին**, **«Չարենցավանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան №3 հիմնական դպրոց»** ՊՈԱԿ-ում, հասցե՝ ք. Չարենցավան Երիտասարդության 17: Տեղեկությունների համար զանգահարել 094-52-51-00 հեռախոսահամարով: